

ՊԱՅՄԱՆՔ

արեւմտեան զին. Պոլսոյ հմր. 8 ՄԼՃ.
» Գաւառաց 10 ՄԼՃ.
վեցամեայ ի. Պոլսոյ 4 ՄԼՃ.
» Գաւառաց 5 ՄԼՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
յանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլլայ:



ԵՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 7 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ, ԼՈՒՐԵՐ

Պէրլին 13 մայիս.

Պիւսարք իշխանն այս առաւօտ
վարդին գնաց:

Ի. Պոլսոյ Գերմանական նախորդ-
դեսպան Բէյտէրլինկ կոմսն յանկար-
ծակի մեռաւ:

Վաշինկթըն 13 մայիս.

Եւրակուտի ժողովը կրկնապէս ըս-
տաւ՝ գանձատուները մինչեւ 1878
թիւ քիչ վերցնելու օրէնքն ընդու-
նեց:

Մատրիւս 13 մայիս.

Բօննա զօրապետն երկու զօրա-
բանակ զրկեց Գարրոսեանց դէմ:

Վիեննա 13 մայիս.

Օսմանեան արժեթղթոց վրայ մեծ
տաքութիւն կայ. Բուժէլի երկա-
թուղեաց բաժինները մինչեւ 50 1/4
ֆիօրլին ելան. Աւսթրո-Օթոման
պայքային բաժիններն ալ 7 1/2 ֆիօ-
րլին:

Հունգարական փոխառութեան
պարգևներուն վիճակահանութիւնը
կատարուելով, առաջին պարգևը
2799 սէրլին 3 1/2 թիւր չափեցաւ:

Լոնտոն 13 մայիս.

Ալէքսանդր կայսեր Լոնտոն մըտ-
նելը խիստ փառաւոր եղաւ:

Լոնտոն 16 մայիս.

Ռուսիոյ կայսրն երէկ դեսպանաց
խնդակցութիւններուն պատասխա-
նելով ըտաւ թէ Ռուսիոյ աշխարհա-
վարութեան նպատակն Եւրոպիոյ մէջ
խաղաղութիւնը հաստատ պահել է,
և յոյս յայտնեց թէ Եւրոպիոյ գըլ-
խաւոր կառավարութիւններն ալ այս
նպատակին համար իրենց ջանքը կը
միացնեն:

Կայսրն այս առաւօտ փարիզի կոմ-
սը ընդունեց խիստ սիրալիր կերպիւ,
և կէս օրին ալ Լոժէնի կայսրուհւոյն
այցելութիւն տուաւ ի Զիւլհէրսթ:

Արտաքին գործոց նախարարի
խորհրդական Պ. Պուրբ ծանոց հա-
սարակաց խորհրդարանին թէ կուտ-
թէմալայի կառավարութիւնն Անդ-
ղիոյ փոխ-հիւպատոսին եղած թշնա-
մանաց փոխարէն հնար եղած բոլոր
հատուցումը տուեր է:

Փարիզ 16 մայիս.

Աղգային ժողովը մէջ Պ. Տը Պրո-
լի յանուն կառավարութեան պըն-
դեց որ նախ ընտրական օրէնքը քըն-
նութեան առնուի, և յայտնեց որ
և թէ այս առաջարկութիւնը չ'ընդուն-
ուի, նախարարութիւնը հրաժարա-
կան կուտայ: Սակայն ժողովը 36 1/2
դէմ 38 1/2 ձայնով մերժեց այս առա-
ջարկութիւնը, և նախարարը ալ ա-
մենը մէկէն անմիջապէս հրաժարա-
կան տուին Մարաշխտո նախագա-
հին: Ժողովը նկատողութեան առաւ

այս հրաժարականը և մինչև երկու-
շարթի իւր նիստը դադարեցուց:

Սատրգ փաշան երկուշարթի օրը
պիտի երթայ Լոնտոն:

Փարիզ 17 մայիս.

Պ. Տը կուլաւի յանձնուեցաւ նոր
նախարարութիւն մը կազմելու գործը:
Կը կարծուի թէ երեքշարթիէն
առաջ չ'կրնար կազմուիլ, և թէ ա-
ջակազմեան ու ձախակազմեան կեդ-
րոններու անդամներէ պիտի բաղկա-
նայ:

Մատրիւս 16 մայիս.

Պահեստի զօրքերէն քառասուն
վաշտ շարժական վիճակի մէջ դըր-
ւեցան:

Պուրբէշ 17 մայիս.

Երկու խորհրդականաց կողմէ պատ-
դմաւորութիւն մը դիմաւորութեան
պիտի երթայ Միլան իշխանին:

Պէրլին 17 մայիս.

Այս առաւօտն լրագրէր կը ծա-
նուցանեն թէ վէրթէր Սեպուհը Կ.
Պոլսոյ Գերմանական դեսպան նշա-
նակուած է:

Փարիզ 17 մայիս.

Վաղը հանրապետականք աղգա-
յին ժողովը լուծումը խնդրելու ա-
ռաջարկութիւն պիտի ներկայացնեն
ժողովոյն, պատճառ ցուցնելով թէ
աղգին ներկայ երեսփոխաններն երկ-
րին սահմանադրութիւն մը տալու ան-
կարող են:

Լոնտոն 18 մայիս.

Ռուս. ֆոն.	48 1/4
Փոն.	4865
»	4869
»	4874
»	4872
»	83 1/4
Անգլ. ֆոն.	93 7/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Արտաքին գործոց նախարարու-
թեան խորհրդական (Միւսթէշար)
վսեմ. Աարիֆի պէյ առաւ. քին գոր-
ծոց նախարար անուանեցաւ Միւշի-
րուլթեան աստիճանաւ:

Սամսոյ կառավարիչ Գոսթաքի
Ատօսիլտէս փաշան արտաքին գործոց
նախարարութեան խորհրդական ան-
ուանեցաւ Պալայի աստիճանաւ:

Յոթիւտէս պէյը Սամսոյ կառա-
վարիչ անուանեցաւ:

Դարձեալ կայսերական հրամանաւ՝
Խակիլտարի կառավարիչ Մէհ-
մէտ փաշան թէքլիմալի կառավա-
րիչ անուանեցաւ:

Լիվա Յաղլը փաշան Խակիլտարի
կառավարիչ անուանեցաւ:

Կիրակի օրը արտաքին գործոց
նախարար վսեմ. Աարիֆի փաշան
կայսերական պալատն երթալով իւր
նոր պաշտօնին և բարձր աստիճա-
նին համար շնորհակալութիւն մա-
տոյց վէհ. Սուլթանին:

Սերվիոյ Միլան իշխանն՝ ինչպէս
որ չարաթ առուր թուով ծանուցե-
րէնք, նոյն օրը վէհ. Սուլթանին
ներկայանալով իրեն եղած սիրալիր
ընդունելութեանց և պատուոց հա-
մար իր շնորհակալութիւնը մատու-
ցանելէ ետեւ՝ Մեծ—Եպարքոսին ալ
հրաժեշտի այցելութիւն մը տուաւ,
և ժամ ու թիւն խղճատին շոգենա-
ւով մայրաքաղաքէն ճանբաց ելաւ
ի վարնա:

Մեկնելէն առաջ իշխանն՝ իր տրա-
մադրութեան ներքեւ դրուած ոտու-
կանութեան հաղորդականներուն և
այլ պաշտօնատարաց ալ յատկապէս
իր դահլիճինը յայտնելով, մէկ մէկ
ոսկի ժամացոյց և 50ական ոսկի ըն-
ծաց տուաւ, նմանապէս անոնց հը-
րամատարութեան ներքեւ դրուած
երկու խուֆա զօրաց և ոտակիւնու-
թեան ղինուորաց ալ պարգև բաշ-
խեց:

Փոքր Ասիոյ սովալուի ժողովըր-
դաց օգնութեան համար վէհ. Սուլ-
թանը 5000 լիւրա շնորհեց. Մեծ—Ե-
պարքոսը 500 լիւրա, Եփէսի խալաֆ
էֆէնտին 250 լիւրա, Պետական խոր-
հրդոյ նախագահ Գեւալի փաշան 400
լիւրա: Ուրիշ նախարարք ալ մէկ մէկ
գումար նուիրեցին:

Կիրակի օրը Բ. Գոնէն լուր եկաւ.
Պատրիարքարան թէ նորընտիր Սըր-
բազան Պատրիարքն երկուշարթի օ-
րը ժամը երեք ու կէսին Կայսերա-
կան պալատն երթալու և վէհ. Սուլ-
թանին ներկայանալու տնօրէնութիւն
եղած է, և թէ Կայսերական պալա-
տէն չորս կառք Պատրիարքարան
գալով Նորին Սըրբազնութիւնը պիտի
առնուն տանին:

Սակայն Սըրբազան Պատրիարք Հօր
վրայ կիրակի իրիկուն ծանր տկարու-
թիւն եկած ըլլալով, երկուշարթի ա-
ռաւօտ իմաց տրուեցաւ Բ. Գրան և
Լինդրուեցաւ որ երկու երեք օր ետ
ձգուի:

Աղբիւնուպոլսոյ և Ֆիլիպէի ա-
ռաջնորդ Գեր. Տ. Գրիգոր Ս. Արք.
եպիսկոպոսն իր անձնական տկարու-
թիւնը դարմանելու համար անցեալ
շարթու Կ. Պոլսի եկաւ:

Լա թիւրքի մէջ կը կարդանք
թէ Ռատիկանութեան նախարար Վը-
սեմ. Հիւսնի փաշան ոստիկանու-
թեան դադանի գործակալներէն շա-
տեր ճանբելէ ետեւ, անոնց Կ. Պոլսոյ
մէջ մնալն ալ միատակար դատելով,
հրաման ըրեր է որ ութ առաւ մէջ
մայրաքաղաքէն հեռանան:

Ինչպէս որ ծանուցուած էր, կի-
րակի իրիկուն Բերայի Գաղլիական

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճան, ու
ծախքը խորագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խորագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պոլ-
սոյ, Չինիլի խան, Մախիփ գրասեն-
եակը:
Համարու ծախքը չ'վճարուած նա-
մակ չ'ընդունուիր:

Թատրոնին մէջ Պ. Մ. Ամերիկեան խիստ
յաջող կերպիւ ներկայացուց ծա-
նուցեալ Պէյո թատրերգութիւնը,
որ ընտանեկան կեանքի մը նկարա-
գիրն է խիստ ճարտար և բնական
կերպիւ յօրինուած:

Ներկայ դառնուող հանդիսականք,
որ դժբաղդաբար քիչ էին, շատ գոհ
եղան թէ՛ խաղէն և թէ՛ անոր ա-
ռաջին և գլխաւոր դերը կատարող
Պ. Մ. Ամերիկեանէն:

Կը լսենք թէ Խակիլտարի Մու-
թաարքութեան Պատրիարքարան
եկած պաշտօնական գրութիւն մը
կը ծանուցանէ թէ Գատրգիւղի Հայ
բնակիչներէն ոմանց դէմ դատ վա-
րող խնդիրեան Ստեփան էֆէնտին,
որ Գաղ. ժողովոյ անդամ է, չէ կրցեր
իր ամբաստանութիւնները հաստա-
տել, հետեւաբար դատը կորուսա-
նելով՝ ամբաստանեալներն անպարտ
արձակուեր են:

Կիրակի իրիկուն ժամ երկուքին
միջոցները Պալատու դրան ներսի
կողմը հրդեհ պատահելով, չէնքե-
րուն հոծութեան և փողոցներուն
անձկութեան պատճառաւ արագա-
պէս ծաւալեցաւ, և պարսպին թէ
ներսի և թէ դուրսի կողմէն յառաջ
քայլելով հարկը յետուսի չափ տուն և
խանութ սյրեցան մեծագոյն մասը
հրէից և փոքր մաս մ'ալ յունաց:
Կըտուի թէ այս հրդեհին մէջ հայ
ջրանկիւրք և գլխաւորապէս Սամա-
թիոյ ջրանկիւրաց խումբը վերջին ծայր
անձնուիրութեամբ աշխատեցին Պա-
լատու Հայոց եկեղեցին ազատե-
լու, որ պահ մը մեծ վտանգի մէջ
ինկած էր, և իրենց այս գովելի ճը-
գանց փոխարէն եկեղեցւոյն կողմէ
առաջարկուած պարգէն ալ չէն ըն-
դունած:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍՏԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

6 մայիս. երկուշարթի իրիկուն	54.35
7 » երեքշարթի առաւօտ	54.40
բացուեցաւ	55 3
կէս օր	
Կ. Պոլսոյ 6 մայիս	
Սուլթան մէկէնքայի բաժնէք Անդ. իր. 7.38	
« փոխանակութեան »	4 38
Կ. Պոլսոյ Պանքային »	5. 6
Բրէտի ժէնէրալ »	40.36
Բրէտի Օսթրո-թիւրք	
երկաթուղեաց հին	36. 421
նոր	95 5
Փոլս. 1863	350
» 1865	352
» 1869	295
» 1872	86 50
Փոլս. 1873	
Թրամուշ	6.50

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՑ

6 ՄԱՅԻՍ

Անգլ. Կրա. զուրուշ 411.	
Նաւթ. ու ոսկի »	87 30
Իմպերալ Ռուս »	50
Դըրմից »	51, 25
Հենց փրանք »	

